

առջեւ սիւն կայ, ըստ սրբոյն Եփրեմին տես-
 լեան, որ զաղօթս սրբոյն Բարսղի իբրեւ
 10 զսիւն լուսոյ ետես, եւ լուաւ թէ սիւնս ա-
 ղօթքն է սուրբ Բարսղի. զի յամենայն եկե-
 ղեցիս աղօթք արդարոց սիւնք են: Եւ կայր
 այն սեանն ներքեւն աղբիւր մի քաղցրահամ
 եւ արծիւ մի ի վերայ. որ էր սուրբն Յոհան.
 15 եւ բխէր կտուցէն ջուր յորդ եւ առատ. եւ
 էին երկու վիշապք յաջմէ եւ ահեկէ, որ եւ
 նոցա բերանոյն ջուր ելանէր, նաեւ ի պոր-
 տոյ: Եւ մտեալ ի ներս տեսաք զեղեցիկ շէնս
 եւ նկարս զուտր ոսկով եւ արծաթով. եւ կայր
 20 զարմանալի մեծ երգէհոն մի, որ ասին թէ
 երեսուն հազար զուռուշ կու նայի. եւ այնպէս
 պայծառ եւ վայելուչ էր, որ աչք հազար
 պիտէր որ վայելէր զշէնքն:

Եւ յարեւելից կողմն կայր եկեղեցի մի
 25 այլ մեծ եւ հին, ի Կոստանդիանոսէ չինեալ.
 եւ ասին թէ անդ է սուրբ Կարապետին
 գլուխն. զոր այլքն ի Մալթայ ասեն. եւ Հայքն
 ասեն թէ ի Գանձասար. եւ մարմին Չաքա-
 րիայ մարգարէին, հօրն Յովանու. եւ այլ
 30 բազում մասն եւ ոսկերք սրբոց. զոր երկրպա-
 զեցաք: Եւ այլ յառաջ գնացաք ուր խորանն
 էր աւագ, որ էր նոր զուգած հրաշալի. եւ
 կայր ի վերայ սեղանին խորհրդանոց մի զար-
 նիշանով փորած եւ ոսկով լցած եւ զանազան
 35 ախամբ եւ մարգարտով ընդելուզած: Հազար